ՎԶՏԻ ԱՐՑՈՒՆՔՆԵՐ

Եթէ իմ դալուկ, խաւար աչքերում
Դեռ մնացել էք արցունքները վըշտի,
Ա՜խ, եկէ՛ք, ցողէ՛ք հողն ու աւազը
Արեւից այրուած այս անապատի,

Ուր ես միայնակ, մարդկանցից հեռու
Լուռ թափառում եմ ալեկոծ հոգւով,
Ուր այրուած սրտիս հառաչն ահարկու՝
Ցոյսերիս նըման կը մարի շուտով։

Ա՜խ, ես ուզում եմ վերջին արցունքով
Այս անապատում մի սեւ քար ցողել։
Աշխարհում թողնել ինչ որ ունէի
Անէծք, ցաւ ու վիշտ երկրին աւանդել...

Մարդկութեան ցաւով տանջւում եմ եւ ես,
Բայց ես անզօր եմ, չեմ կարող կըռուել...
«Կեանք, բարե՛ւ մնաս, իմ ծանր խաչը
Չե՛մ կարող մինչեւ Գողգոթա տանել...

Պ. ՄՈՇՈՒԵԱՆՑ։